է։ Ուղտի տանջուած վզին անց կացրած զանգակի նման նա կրել է մի քանի պարզութիւններ եւ անապատներ անցել։

Եկել է Ս–ը, նկարիչը։

Տաղանդաւոր եւ խորամանկ։ Նոր–Նախիջեւանի գիւղերից։ Առաւօտից մինչեւ երեկոյ իշխանութեան անդամներին է այցելում, սրա դուռը ծեծում, նրա դուռը ծեծում, պատկեր ծախում, դրամ ստանում, յօդուած աղերսում։ Երեսին նայիս՝ համեստ է, բառերը ազնիւ են, միշտ էլ հայրենասիրութեան մասին է խօսում։ Վա՜յ թէ իր շահերին դպչես՝ ամէն բան կ'անի, որ անօթի մեռնես։ Իր հաստ դաւազանը ձեռքին, դռնէ դուռ, մարդէ մարդ, փոքրիկ խանութպաններին յատուկ՝ ոխ եւ նենգութիւն կը թափի։

Ու ներս են մտնում, մէկը միւսի ետեւից միւսները։

Տիգրան Ա–ն, երկարահասակ, բաղուկները ջաղացի թեւերի պէս օդի մէջ շարժելով։ Ուրիշների յաջողութեան ետեւից փոշիների մէջ թաւալուելով վազում է, մի քիչ կեանք է աղերսում։ Նախկին «ժողովրդական»՝ պատրաստ ամէն ցածութեան, դունչը ցեխին վարժ։

Գ–ն՝ նախկին մարդ, այսօր ճիգ է անում կարելիութիւնների դուռը ծեծելու։ Մի տեսակ ողեւորութիւն է դնում դաժան ճակատագրի առջեւ։ Փաստաբան, դրամատուրգ, գործի մարդ։ Խօսում է բառերը ուտելով եւ մի քիչ էլ թքնելով։ Իր ասածներին չի հաւատում, ճիգ է անում ուրիշներին հաւատ ընծայել։

Ուրիշներ։

Մ–ն սուրճ է խմում, մի քիչ մտածում եւ ասում է.

— Եղբա՛յր, ե՞րբ պիտի առաջադիմենք. հարեւանս ամէն օր իր կինը ծեծում է, եւ «կինբաժինը» ուշադրութիւն չի դարձնում...

Տօլստոյը մի տեղ ասում է... Սիմֆոնիական երաժշտութեան պահանջ եմ զգում, ապրում ենք վայրենիների նման. թառը, վերջ ի վերջոյ, բարբարոսների գործիք է...

Գ–ն հակաճառում է։ Մ–ն զայրանում է.

— Դա, միջնադարեան գաղափար է, նո՛ր, նո՛ր բան ասացէք...

Իրականի մէջ այդ «նոր»ը հին մի ցեխ է, որի մէջ բարեկամս վաղուց մխրճուել է։

Գ–ն վախում է լրտեսներից եւ ամէն րոպէ «կարմիր Մոսկուայի» անունն է տալիս։ Մարդ աղան մօրուքի տակ ծիծաղում է։ Ս–ն աչքով է անում եւ իբրեւ լաւ դիւանագէտ լռում է։

* * *

Արագածի շուրջը մեր գիւղացիները զետնափոր որջերի մէջ են ապրում։ Պատուհանից փսխում են։

— Մարդու ստեղծագործական թափը նրա հոգեկան պայծառութիւնով կարելի է չափել։ Մօտենալ իրականութեան, առարկայական աշխարհին, չտեսի հետաքրքրութիւնով, գաւառացու սահմանափակ բաղձանքով, կամ իրապաշտ հաւատաւորի մոլեռանդ հաստատամտութիւնով, ասել է՝ լքել սեփականը եւ մտերիմը, ներքին այն ներդաշնակութիւնը, որով կարելի է չափել տիեզերքը։

Ս–ն աչքերը տնկում է սուրճի վրայ։ Ա–ն բաղուկները շարժում է օդի մէջ։ Մ–ն ասում է.

— Զարմանում եմ, դուք եւրոպացիներդ սքօլաստիկ գաղափարներից չէք ազատագրուում... Ռուս ժողովուրդը չես հասկանում... միամիտի բաներ ես ասում... չհասկացայ էլ...

Ես ասում եմ՝ ծառը իր արմատն է փնտռում։

* * *

Մեր երկիրը դաժան է եւ անողոք։ Նրա ամէհի, ժայռոտ լեռները, նրա ողբերգական անապատները, նրա անհորիզոն, իր մէջը կծկուած, խստադէմ կեցուածքը, նրա ծանր լռութիւնը, խածել են մեր սիրտը եւ ուղեղը, կասեցրել մեր թափը եւ ծանր կապարի տակ, ճզմել մեր թռիչքը։

— Հողը պինդ ա, ասում է Մ–ն, ջուրը դպչում ա քարերին եւ չի թրջում։ Արօրը փչրւում ա. չինականի թեւը ծռւում։

Աշխարհից հեռու, ամայի այս բարձրաւանդակի վրայ՝ մենք բուք ենք հերկում եւ հեղեղ ցանում։

* * *

Նկարիչ Ս–ն, Մոսկուայում նստած, երեւակայական արեւելեան բլուրներ էր նկարում, ոճաւորուած ուղտերով շրջապատուած։ Վառվռուն գոյների տակ, անկարելի լոյսեր՝ բոյսերին չտեսնուած թեւեր էին տալիս եւ ժայռերի վրայ ոսկիներ էին թափում։ Արեւելեան, երազային դաշտանկարների միջից, կուժը գըլ-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան